

Թիւր շունի Մի ելք է մնում այդ  
զրույթեան վերջ տալու համար.— հայ  
զրույթեան և զբաղանդեան մէջ

զործողներին թէ օգնելու և թէ օժան-  
դակելու համար հիմնել արտասահմա-  
նում մի ֆոնդ...

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս վերջին համարով լրանում է «Մուրճ»-ի նոր շրջանի բառամեակը։ Մենք միքանի անգամ ասել ենք որ ամսագիրս սննի որոշ մինիմալ բիւզժէ, որ դեռ չի ծածկուում բաժանորդագրութեամբ։ Այնուամենայնիւ մենք յամառութեամբ շարունակում ենք գործը դեֆիցիտով, յոյս դնելով ապագայ աւելի աջող բաժանորդագրութեան վրայ, որովհետև տարէցտարի, թէև դանդաղօրէն, բայց աճում է բաժանորդների թիւը։ Նրանք, որոնք ծանօթ են մեր ընդհանուր պայմաններին և դիտեն մեր ժողովրդի մտրալ պահանջների ստոր մակերևոյթը՝ չեն զարմանալ, ըր միակ ամսագիրը ունի միայն 900 բաժանորդ և ոչ՝ մի քանի հազար։ Ոչ միայն գաւառն է դեռևս անընթերցասէր, այլև օտարացած Թիֆլիսը, որի 60 հազար հայ ազգաբնակիւթիւնը տալիս միմեայն 100 բաժանորդ, այն էլ մեծ մասամբ գաւառացի... \*)

Խմբագրութիւնս իր պարտքն է համարում շնորհակալութիւն յայտնել երդուեալ հաւատարմատարներ պ. պ. Սամսոն Յարութիւնեանին և Յովհաննէս Սաղաթելեանին, որոնց նախաձեռնութեամբ և ջանքերով բազուցի միքանի պարոններ խմբագրութեան ուղարկել են բաժանորդագիրն-նուէրներ՝ Այդ նուէրների դիմաց իբր էլ վիճակնետ (համարժէք) մենք ուղարկում ենք ամսա-

\*) Թիֆլիսի մանր ծառայողների համար բաժանորդագիրն վճարումը դիւրացնելու նպատակով ընդունում ենք դրանցից բաժանորդագիրը մաս-մաս նաև այսպէս. սկզբում 2 բուբլի և ապա մնացած 8 բուբլին— ութ ամսուայ ընթացքում, ամիսը 1 բուբլի:

գիրը ղանազան գիւղերի համայնքներին: Այդ ձևի օգնութիւնը մենք համարում ենք միակ ընդունելին, թէև այդ կերպ դէֆիցիտի հարցը դեռ չէ լուծուում...

Բագուից պ. պ. Մկր. Բալանթարեանից, բժ. Թ. Ջարարեանից և բժ. Ա. Յակոբեանից ստացուած քաժամորդագին—նուէրներով ուղարկուած են 1904 թ. «Մուրճ»-եր հետեւեալ գիւղերը. Մալիշկա, Ապրակունիս, Կուզնուի, Ջահուկ, Աստապատ, Բաշ-Քիատիկլար, Բերնա, Հոփվերան, Բաշգիւղ, Քերս, Ղարափանք, Սուվանվերդի, Արթիկ, Ղսպապի, Ախալցխա, Խնձորեսկ, Ազա, Հին-Ջուղա, Բըխ, Վարդաշէն և Թիւրքիայի մի քանի տեղեր:

Պ Ո Ս Տ Ա Ր Կ Ղ

ՄՈՍԿՈՒԱ, պ. Ա. ԵՄՏՈՒՐԵԱՆ.—Ցաւում ենք որ Ձեր տկարութեան սրտճառով ժամանակին անկարող եղաք հասցնել «Կուսճանութեան» թարգմանութիւնը: Ստիպուած ենք շարունակութիւնը գցել 1905 թ. առաջին համարի մէջ:

Ծանօթ. «Մուրճ»-ի 1904 թուականի այն բաժանորդները, որոնք 1905 թուականին բաժանորդ չեն գրուելու, սակայն կ'ուզենային ստանալ «Դասաճանութիւն» դրամայի թարգմանութեան վերջը— թող բարեհաճին յայտնել մեզ իրանց ցանկութիւնը և հասցէն մինչև այս տարուայ գեկտեմբերի 31-ը: Նոր բաժանորդներին այդ դրամայի սկիզբն ուղարկելը մեր պարտքը չենք համարում:

Վ Ր Ի Պ Կ Ն Ե Ր

Չարլզ Դիկենզի «Ծննդեան արձակ երգերից» գրուածքի մէջ.

№ 10-ում:

Նրես	տող	սխալ	ուղիղ
90	12 վ.	ձայդ	ձայնդ
90	2 ն.	խօսք ցուրտ	ցուրտ խօսք
103	24 վ.	անասանի	անասի

№ 11-ում:

72	16 վ.	ուրուականը արդ	ուրուականը
72	20 վ.	կրկին միտքն	կրկին նոյն միտքն
74	7 վ.	ստի	սրի
74	7 ն.	լսել	իմացել
76	17 վ.	դալիս	գնալիս
79	2 վ.	ֆէն	ֆէն
80	14 ն.	ձեր	Եւր
80	7 ն.	Ուրիկինջ	Ուրիկինդ
81	11 վ.	Ֆիլդըվել	Ֆիլդըվել
82	33 վ.	այն	նոյն
96	11 ն. կը	լինի հաշմանդամութիւնը	կը լինի իրա հաշմանդամութիւնը
101	24 $\frac{1}{2}$ վ.	բոցկլոդ	բոցկլտոդ